

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2016 թվականի ընթացքում ՀՀ միջազգային օդանավակայանների և օդային երթևեկության կազմակերպում, աերոնավիգացիոն կապ և դիտարկում իրականացնող և աերոնավիգացիոն տեղեկատվական ծառայություն մատուցող կազմակերպության թռիչքների անվտանգության վերահսկողության մասին

Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունների (ԻԿԱՕ, Եվրակոնտրոլ) պահանջների և ՀՀ օրենսդրության համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության (այսուհետ՝ Գլխավոր վարչություն) կողմից 2016 թվականի ընթացքում իրականացվել է թռիչքների անվտանգության վերահսկողության՝

1. <<Արմենիա>> միջազգային օդանավակայաններ>> փակ բաժնետիրական ընկերության <<Չվարթոնգ>> և <<Շիրակ>> միջազգային օդանավակայանների սերտիֆիկացված աերոդրոմներում:
2. Օդային երթևեկության կազմակերպում, աերոնավիգացիոն կապ և դիտարկում իրականացնող և աերոնավիգացիոն տեղեկատվական ծառայություն մատուցող <<Հայաերոնավիգացիա>> փակ բաժնետիրական ընկերությունում:
3. Օդանավերի վերգետնյա տեխնիկական և կոմերցիոն սպասարկում իրականացնող <<Չվարթոնգ Հենդլինգ>> և <<Ավիա-Մերվիս>> փակ բաժնետիրական ընկերություններում:
4. <<Արմենիա>> միջազգային օդանավակայաններ>> փակ բաժնետիրական ընկերության <<Չվարթոնգ>> օդանավակայանում վտանգավոր բեռների վերգետնյա սպասարկման աշխատանքների նկատմամբ:

Վերահսկողություններն իրականացվել են Գլխավոր վարչության պետի 2015 մայիսի 19-ի N112-Ա, 2014 թվականի հոկտեմբերի 6-ի N238-Ա և 2016 թվականի փետրվարի 25-ի N37-Ա հրամաններով հաստատված համապատասխանաբար <<Հայաստանի Հանրապետության միջազգային և ներքին օդանավակայանների սերտիֆիկացված աերոդրոմների, վերգետնյա միջոցների և ծառայությունների պետական և մասնագիտական վերահսկողության, ուսումնասիրությունների և տեսչական ստուգումների ուղեցույցի>>, <<Օդային երթևեկության կազմակերպում (սպասարկում), աերոնավիգացիոն կապ և դիտարկում, աերոնավիգացիայի օդերևութաբանական ապահովում, աերոնավիգացիոն տեղեկատվության ծառայություն իրականացնելու թույլտվություն ստացած (սերտիֆիկացված) կազմակերպությունների համապատասխանության վերահսկման գործընթացի ուղեցույցի>> և <<Հայաստանի Հանրապետության միջազգային և ներքին քաղաքացիական ավիացիայի օդանավակայաններում վտանգավոր բեռների վերգետնյա սպասարկման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների պետական և մասնագիտական վերահսկողության, ուսումնասիրությունների և տեսչական ստուգումների ուղեցույցի>> համաձայն:

<<Չվարթոնգ>> և <<Շիրակ>> միջազգային օդանավակայանների սերտիֆիկացված աերոդրոմների վերահսկողության շրջանակներում ուսումնասիրվել են՝

1. Աերոդրոմի տարրերի (վազբուդի, դեկուդիներ, կառամատույցներ, անվտանգության գոտիներ) շահագործողական վիճակը:
2. Աերոդրոմի ցերեկային և գիշերային նավիգացիոն միջոցների համապատասխանությունը, ինչպես նաև օդանավակայանի էներգամատակարարման համակարգը:
3. Աերոդրոմի վթարափրկարարական ծառայությունը:

4. Աերոդրոմի տարրերի շահագործողական վիճակի պահպանման նպատակով օգտագործվող տրանսպորտային միջոցների պատրաստականությունը ձմեռային ժամանակաշրջանին:
5. Աերոդրոմի թռիչքային անվտանգության կառավարման համակարգը:

«Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության վերահսկողության շրջանակներում ուսումնասիրվել են՝

1. Աերոդրոմային <<Իրտիշ>>, մայրուղային <<ՏՈՒԿ>> և բազմադիրքային P3-D դիտարկման համակարգերի կողմից ստացվող տեղեկատվության ճշտությունները:
2. <<Չվարթնոց>> և <<Շիրակ>> օդանավակայանների աերոդրոմներում շահագործվող նավիգացիոն միջոցների՝ վայրէջքային համակարգերի (LLZ, GPE, VOR/DME) և ավտոմատ ռաիոպելենգիչ (ADF) աշխատունակությունը:
3. Ավիացիոն ֆիքսված էլեկտրակապի (AFTN), ինչպես նաև աերոդրոմային տեխնոլոգիական կապերի ապահովումը:
4. Աերոնավիգացիոն տեղեկատվական ծառայությունը (AIS)՝ հրապարակումների գործընթացը, օդանավի անձնակազմերին աերոնավիգացիոն տեղեկատվության տրամադրումը, NOTAM-ի հրատարակումը:
5. Օդային երթևեկության կառավարման կենտրոնը և <<Չվարթնոց>> ու <<Շիրակ>> աերոդրոմների <<Աշտարակ>> կարգավարական կետերը:
6. Օդային երթևեկության կարգավարման գործավարությունը:
7. Օդային երթևեկության կարգավարների և ինժիներա-տեխնիկական անձնակազմի մասնագիտական պատրաստվածության ապահովմանն ուղղված միջացառումները:

<<Չվարթնոց Հենդլինգ>> և <<Ավիա-Սերվիս>> փակ բաժնետիրական ընկերությունների վերահսկողության շրջանակներում ուսումնասիրվել են՝

1. Աերոդրոմի կառամատույցներում շահագործվող հատուկ տրանսպորտային միջոցների շահագործողական վիճակը:
2. Հատուկ տրանսպորտային միջոցների համարվածությունն անվտանգության ապահովման համար նախատեսված համապատասխան միջոցներով:
3. Օդանավերի տեխնիկական և կոմերցիոն սպասարկման նպատակով շահագործվող հատուկ տրանսպորտային միջոցների վարորդների մասնագիտական պատրաստվածության ապահովմանն ուղղված միջոցառումները և կառամատույցում գործունեություն իրականացնելու համապատասխան թույլտվությունները:

<<Չվարթնոց>> օդանավակայանում վտանգավոր բեռների վերգետնյա սպասարկման աշխատանքների վերահսկողության շրջանակներում ուսումնասիրվել են՝

1. Ուղևորների և ուղեբեռների հաշվառման և զննման ծառայությունների աշխատակիցների մասնագիտական պատրաստվածության ապահովմանն ուղղված միջոցառումները:
2. Ուղևորներին վտանգավոր ուղեբեռների փոխադրման հետ առնչվող անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը:
3. Բեռնային համալիրում վտանգավոր բեռների սպասարկման գործընթացը, վտանգավոր բեռների համար նախատեսված մեկուսացված տարածքները, անձնակազմի մասնագիտական պատրաստվածության ապահովմանն ուղղված միջոցառումները:
4. Վտանգավոր բեռների վերգետնյա սպասարկման գործընթացը և անհրաժեշտ տեխնիկական միջոցները:

Վերահսկողությունների արդյունքում թռիչքների անվտանգությանը սպառնացող թերություններ և դիտողություններ չեն գրանցվել և թռիչքների անվտանգությանը վերաբերվող ուղեցույցներ չեն թողարկվել: